



# Զապել Եսայան

## Միլիտարի պարտեզները

### Պուպրիկներու տունը

Որոշեր էինք երթալ ամառանոց, Մարմարա ծովուն եզերքը, Մալթեփե: Բայց մինչեւ երթալը, որ կապուած էր շարք մը դժուարութիւններ յաղթահարելու հետ, հայրս բժիշկի խորհուրդով որոշեց ինձ հեռացնել տունէն: Մօրս ջղային տագնապները սկսեցր էին իմ վրաս ազդել մտահոգիչ աստիճանով մը:

Երկար վարանումներէ յետոյ հայրս հաւանեցաւ ինձ յանձնել Սանդուխտ հանրմին, որ կը բնակէր Սկիտարի բարձունքը, նոր շինուած տուներու շարքի մը մէջ: Հայրս եղեր էր կնքահայր Սանդուխտ հանրմին ամուսնութեան ատեն եւ, իր լայն օրերուն հանդիպած ըլլալով այդ եղելութիւնը, ծանրագին գոհարեղէն մը նուիրած էր: Սանդուխտ հանրմ միշտ յարգալիի երախտապարտութիւն ունեցած է հօրս նկատմամբ:

Անիկա դեռ երեսունը նոր անցած կին մըն էր, բայց մազերը ամբողջովին ճերմկած էին եւ կը զարդարէին իր թարմ եւ սիրուն դէմքը արծաթափայլ գանգուրներով:

Կը հագուէր միշտ մանրակրկիտ խնամքով եւ Սկիտարի ժամանակի կիներուն կը հանդիսանար վայելչութեան եւ ճաշակի օրինակ: Հայրս կ'ախտրժէր այդ կիներն եւ երբ մեզ այցելութեան կու գար, հօրս աչքերը կը ժպտէին գոհունակութեամբ: Հայրս ներողամիտ էր Սանդուխտ հանրմին թերութիւններուն, որոնք անհանդուրժելի կը համարուէին մեր տան կիներուն կողմէ: Մօրաքոյրերս առիթ չէին փախցնել ըսելու որ Սանդուխտը գեղեկ կին է, հաբիթային մէկն է:

Անիկա կը խօսէր մաքուր հայերէն, բայց իր արտասանութեան մէջ օտար շեշտ կար: Կ'ըսէին որ ընկեցիկ յոյն աղջիկ էր եւ որդեգրուած էր հայ ընտանիքի մը կողմէ: Աւելի ուշ լսեցի որ այդ ընտանիքի մայրը դրացի յոյն սափրիչէ մը ունեցած է երեխան եւ գաղտնի ծննդաբերութենէ յետոյ նորածինը, ցուրտ ձմեռատեն, իբր ընկեցիկ դնել տուած է իրենց տան սեմին եւ ամուսինը համոզած է որ որդեգրեն երեխան փոխանակ յանձնելու յոյն եկեղեցիին: Այդ կարգին ընկեցիկներ շատ կային Կ. Պոլսոյ հայ եւ յոյն ազգաբնակչութեան մէջ:

Սանդուխտ հանրմին ամուսինը, Ալեքսան աղա, տարեց մարդ մըն էր, նիհար եւ ոսկրուտ, քիչ մը կորաքամակ: Անիկա շուկային մէջ գործ մը ունէր, որով բարեկեցիկ կեանք ունէին:

Ալեքսան աղա տարուան որոշ մէկ թուականին համրութեան մէջ կը մտնէր: Կ'երեւի սա սովորական ախտ մըն էր, որովհետեւ ամէնքը կ'ընդունէին այդ բանը առանց զարմանալու եւ երբ այդ թուականը գար, կ'ըսէին որ «Ալեքսան աղան խառնախսին մտեր է»: Կինը, որ շատ որոշ գիտէր այդ թուականը, երբ օրերը մօտենային, կը շտապէր ամուսնոյն հետ կարգադրել տանը վերաբերեալ կարգ մը գործեր:

– Ալեքսան աղա, կ'ըսէր ան էրկանը, քան տահա խառնախսին չես մտած, թենէքէճիին ըսէ, օլուխները շինէ, ետքը անձրեւները կու գան, բացը կը մնանք:

Այդ նշանաւոր օրուան մօտ էր, երբ Սանդուխտ հանրմ առաջարկեց ինձ իր տունը տանիլ:

– Ալեքսան աղան ալ քանի մը օրէն խառնախսին պիտի մտնայ, ըսաւ ան հօրս, ես ալ մինակս մերաքներս կ'ելլէ, մէկը չկայ որ հետը երկու խօսք ընեն: Թող տուէք, չոճուխը տանին, ինձի աղէկութիւն ըրած պիտի ըլլաք:

Եւ վերջապէս առաւօտ մը Սանդուխտ հանրմ եկաւ, ձեռքէս բռնեց եւ ինձ իր տունը տարաւ:

Առաջին օրերը դեռ Ալեքսան աղան խառնախսին չէր մտած: Ամէն առաւօտ կանուխ կ'ելլէր անկողնէն, գիշերանոցով կը նստէր բազմոցին անկիւնը եւ կը

սպասէր որ կինը քաֆէն եփէ, հացը տաքցնէ կրակարանին վրայ եւ շերտ մը խաշեր պանիրով հրանցնէ իրեն: Ան լուռ կը նախաճաշէր, յետոյ կը հագուէր եւ կ'իջնար սանդուխներէն: Կինը արտորալով կը հետեւէր ամուսինին եւ բակին մէջ, մարդուն հովանոցը ձեռքը բռնած, կը սպասէր որ ան մուճակները հանէ եւ կօշիկները հագնի: Այդ միջոցին Սանդուխտ հանրմ խոնարհաբար կ'ընէր իր պատուէրները եւ երբ Ալեքսան աղան դուրս կ'ելլէր, կինը սեմին վրայ կանգնած ետեւէն կը նայէր, մինչեւ որ ամուսինը դառնար փողոցին անկիւնը: Գրացի տուններէն, վարագոյրներու արանքէն, կիներ կը դիտէին Սանդուխտ հանրմին ժպտուն դէմքը եւ վարմունքը ու կը յայտարարէին.

– Ջեզեկ կնիկ է...

– Գիտես քի նոր հարս նոր փեսայ են...

Սանդուխտ հանրմին տունը ինձ ներկայացուց բազմաթիւ նորութիւններ: Բազմոցներուն անկիւնները դրուած էին գոյնզգոյն սնդուսի վրայ ասեղնագործուած բարձեր եւ պատերուն վրայ կային նկարներ, ոսկեգօծ շրջանակներու մէջ: Մէկ շրջանակ մը կը բովանդակէր ինձ համար մասնաւոր հետաքրքրական պատկեր մը: Սեւ թաւիշի վրայ բոլորակ գետեղուած էին մետաքսի բոժոժներէ կտրտուած եւ շինուած արուեստական ծաղիկներ եւ ճիշդ մէջտեղը դրուած էր Սանդուխտ հանրմին եւ ամուսինին լուսանկարը՝ հարսանեկան հագուստներով:

Սանդուխտ հանրմ ունէր նաեւ իր սնտուկին մէջ փայլուն եւ գունազեղ կերպասներ, որոնք դուրս կը հանէր եւ կը խաղար անոնց հետ: Ան գոհունակութեամբ կը ժպտէր, երբ ես հիացումս կը յայտնէի եւ ինձ թող կու տար որ ես ինքս ձեռնոտեմ թաւշեայ եւ մետաքսեայ կտորները, ինչ որ մասնաւոր հաճոյք մը կը պատճառէր ինձ, մատներուս ծայրերէն ստացուած յատուկ զգացողութիւն մը:

Ալեքսան աղային մեկնելէն յետոյ Սանդուխտ հանրմ կ'իջնար խոհանոց եւ բժախնդիւր ուշադրութեամբ կերակուրներ կը պատրաստէր: Ջինքը ղեկավարող հոգը այն էր թէ Ալեքսան աղա ի՞նչ կը սիրէ կամ չի սիրէր: Կարծես ինքը անձնական ճաշակ չունէր եւ իր ամուսնոյն հաճոյք պատճառելու մտահոգութիւնը

իր գլխաւոր դերն էր կեանքին մէջ: Առաջուց ան կը հրճուէր այն վտիտ վարձատրութիւնով, որ իր ջանքերը եւ խնամքները պիտի շնորհէին իրեն. ժլատ ժպիտ մը Ալեքսան աղայի թթուած դէմքին վրայ: Բայց այդ ժպիտն ալ յաճախ չէր երեւար: Բայց Սանդուխտ հանրմ այդքանով չէր յուսահատեր եւ հետեւեալ օրը ինձ կ'ըսէր մեծ բաւականութեամբ.

– Ալեքսան աղան եփած տոլմայիս հաւնեցաւ, ամա բան չըսաւ... Ես տեսայ, հագ ըրաւ, նորէն առաւ:

Երբ Սանդուխտ հանրմ տան գործերով կը գբաղէր, ես պարտեզ կ'երթայի եւ կը գբօսնէի: Չուան կը ցատկէի, օրօրանի մը վրայ կ'օրօրուէի կատաղօրէն, երբ միջոցներս կը սպառէին, կը դիտէի ածուներու վտիտ բոյսերը եւ վատուծ ծաղիկները, որոնք դժուարաւ կը ծլէին եւ կը ծաղկէին այդ կաւային հողին մէջ: Ո՛րքան հեռու էինք Սիլիհտարի պարտեզներէն... Անոնք կարծես հեռու հեռաւոր երկիրներ էին որոնց կարօտը երբեմն թախիծ կը պատճառէր ինձ:

Կէս օրերէ ետք, երբ այցելուներ չգային, Սանդուխտ հանրմ ինձ կը հագուեցնէր, մագերս կը կապէր կապոյտ կամ վարդագոյն ժապաւէնով, ինքն ալ կը հագուէր կը սքուէր եւ միասին կ'երթայինք այցելութեան: Մեր գացած տուները բոլորովին անձանօթ միջավայր մը կը ներկայացնէին ինձ: Ատոնք բարեկեցիկ շուկացիներու ընտանիքներ էին որոնց խօսքերը, վարմունքը, հրամցուցած բաները հաշուրած եւ առաջուց եւ ընդմիջտ որոշուած էին: Այդ տուներուն մէջ կիները, երիտասարդուհիները եւ նոյնիսկ երեխաները գուրկ էին ինքնաբոյս ոեւէ արտայայտութենէ: Ամեն ինչ չափուած, ձեւուած էր: Անոնց համար կային բաներ, որ «չէին ըլլար»: Եւ իրենց երկար խօսակցութիւնները թունաւոր քննադատութիւններ էին ուրիշ իրենց նման ընտանիքներու մասին, որոնք պզտիկ շեղում մը գործեր էին որոշուած օրէնքներէն, բան մը ըրեր էին որ «չէր ըլլար»:

Այդ կարգի ընտանիքներուն գլխաւոր փառասիրութիւնն էր որդեգրել եւրոպական սովորութիւններ: Անոնք ուշադրութեամբ կը հետեւէին փարիզեան նորաձեւութեան, եւ այդ կարգի հրատարակութիւններու պատուէրներուն կը հետեւէին կամ կը կարծէին հետեւիլ կէտ առկէտ: Մանաւանդ նորահաս երիտասարդուհիները հրաբորբոք եռանդով կը խօսէին, երբ այդ նիւթին վրայ ըլլար խօսակցութիւնը:

Տղամարդիկ շուկային մէջ օրն ի բուն կը ծախէին, կը գնէին, կը խաբէին, կը ստէին, կը խարդախէին եւ կը ջանային իրենց վաստկածովը ոչ միայն յագուրդ տալ իրենց կիներու եւ աղջիկներու պահանջներուն, այլեւ դրամօժիտ պատրաստել հասած կամ հասնելիք աղջիկներուն: Այդ դրամօժիտը կը տարուբերէր երկու հարիւրէն մինչեւ հինգ հարիւր ոսկի, որուն թեկնածու կը ներկայանային նոյնքան խաբեբայ, ստախօս, «հանած վարած» երիտասարդներ, որոնց տաբատները սակայն կը լայնային կամ կը նեղնային ըստ փարիզեան նորածնութեան:

Ես ատելով կ'ատէի այդ ընտանիքները եւ անտանելի կերպով կը ձանձրանայի այդ խնայողաբար գարդարուած տուններուն մէջ, ուր եթէ յանկարծ թելոյ երկնցնէիր, յիմար եւ տգեղ գեղօր մը կ'իյնար խախտուտ սեղանի մը վրայէն: Իսկ կիները, մեծ թէ երիտասարդ, ինձ կը թուէին տգեղ եւ հակակրելի եւ ամէն բանի վրայ ալ չար: Գրեթէ միշտ Սանդուխտ հանրմ վշտացած տուն կը վերադառնար եւ կ'ըսէր. «Ա՛լ մէյ մըն ալ ոտքս պիտի չդնեմ ատոնց տունը», որովհետեւ այդ «բարեկամուհի»ները չէին վարաներ անախորժ եւ խայթող ակնարկութիւն մը ընել իրեն: Բայց հետեւեալ օրը, ամէն ինչ մոռցած, կը հագուէր կը սքուէր եւ այցելութեան կ'երթար նմանօրինակ տուն մը:

Այդ կիները ինձ հետ կը վարուէին անհարկի հետաքրքրութեամբ, ինձ կը հարցուփորձէին մեր տան վիճակին վրայ: Բայց ես յամառ եւ վայրենի լռութիւն մը կը պահէի: Այն ատեն իրենց գէշ վրէժը կը լուծէին իրարու ըսելով.

– Շիրիներնց թոռն է...

Եւ իմաստալից ակնարկ մը կը փոխանակէին իրարու հետ:

Երբ վերջապէս օրը հասաւ եւ Ալեքսան աղան խառնախօսին մտաւ, Սանդուխտ հանրմ իր կարգին մտաւ տխրութեան մէջ: Անիկա երբեմն մեղմօրէն կ'արտասուէր եւ ինձ խելք դնելով կ'ըսէր որ բան մը հոգը պիտի չընէր, եթէ գոնէ մէկ երեխայ ունեցած ըլլար: Բայց չեմ գիտեր ինչո՞ւ այդ յոյսը միանգամ ընդմիշտ չքացած էր իրեն համար եւ այդ իր դժբախտութիւնն էր: Ինձ կը գրկէր կաթոզին եւ արցունքոտ այտը դնելով երեսիս կը մրմնջէր մայրական սիրոյ եւ գորովի խօսքեր:

Օր մըն ալ, ինձմէ խոստում առնելէ յետոյ որ ոչ ոքի բան պիտի չըսեմ, լալագին ձայնով ինձ յայտնեց թէ ինք ալ չոճուխներ ունի: Անմիջապէս դէմքը պայծառացաւ, ժպիտը ծաղկեցաւ դէմքին վրայ եւ սովորական շէնշող բնատրութեան անձնատուր ըլլալով սկսաւ ժիր շարժումներով սենեակը յարդարել, որմէ յետոյ պիտի երթայինք չոճուխները տեսնելու:

Վերջապէս ձեռքէս բռնելով Սանդուխտ հանրմ ինձ բարձրացուց վերի շահնիշերով սենեակը եւ բանալով կղպուած դարան մը, մէկիկ-մէկիկ դուրս հանեց շքեղօրէն հագուած պուպրիկներ եւ շարեց բազմոցին վրայ: Անոնք Բերայի «Պոն Մարշէ»-էն գնուած, անդամները շարժուն եւ աչքերը բացխփող պուպրիկներ էին որոնք հագուեցուցած էր վարդագոյն, կապոյտ, դեղին, կարմիր սնդուսէ եւ թափշէ գարդարուն զգեստներով:

Այդ պուպրիկները իրենց անունները ունէին, իրենց բնատրութիւնը ունէին:

– Նայէ՛, կ'ըսէր, դիմելով կապտագգեստ պուպրիկի մը մոմէ սատած դէմքին, Սիրանուշա աղէկ աղջիկ է, քեզի պէս ինատճի չէ, բան մը ըսեմ նէ խօսք մտիկ կ'ընէ:

Յետոյ Սանդուխտ հանրմ մեղմօրէն կը խօսէր ամէն մէկին հետ, երբեմն կը յանդիմանէր, երբեմն խորհուրդներ կու տար եւ ինչպէս եթէ իրեն առարկութիւն մը ընէին, պահ մը լուռ կը լսէր եւ յետոյ կը բացագանչէր.

– Չէ՛, մօրը խօսքը լսող չոճուխին աստանկ բան չ'ըլլար, դուն ինձի մտիկ չըրիր, շատ շքէր կերար, անոր համար ակոռդ կը ցալի կոր:

Եւ մատը շարժելով կը սաստէր անշարժ եւ անկենդան պուպրիկներէն մէկը:

Հետզհետէ Սանդուխտ հանրմ ոգեւորուեցաւ եւ սկսաւ այնքան ուժգնօրէն հաւատալ որ այդ պուպրիկները կենդանի արարածներ են որ սկսաւ շուարիլ: Կարծես ամէն կողմէ իրեն կը խօսէին եւ ինք չէր հասներ պատասխանելու:

– Նորէն գոգնոցդ աղտոտեր ես, Իսկուհի՛, աստ չեղաւ. ամէն օր նոր գոգնոց չեմ կրնար հասցնել քեզի... մինակ ձեռք եմ, տունին մէջ հազար բան ունիմ ընելիք, քիչ մը խիղճ ունեցիր...

Աչքերս սկսան մթննալ եւ կարծես իմ կարգիս իրականութեան զգացումը կորսնցուցի: Անորոշ անհանգստութիւն մը ինձ գրաւեց, մինչ ինձ կը թուէր որ իրաւամբ պուպրիկներու անշարժ դէմքերը կը սկսէին ոգետրուիլ, աչքերը արտայայտութիւն ստանալ եւ անոնց կարծր անդամները՝ ճկունութիւն եւ շարժում...

Տան ջախջախը զարնուեցաւ եւ սթափեցուց Սանդուխտ հանրմը: Իր ետեւէն վազեցի սանդուխներէն վար: Այդ տեսարանին յիշողութիւնը անբացատրելի անձկութեամբ կը ճնշէր հոգիս: Ես ալ ունէի պուպրիկներ, կոտրած, հերաթափ սովորական պուպրիկներ եւ նաեւ քուրջէ շինուած անթիւ պուպրիկներ, որոնց կեանք եւ յոյզ փոխ կու տայի: Բայց իմս ուրիշ բան էր: Անոնք իմ ձեռքիս մէջ միջոցներ էին որոնցմով պատմութիւն մը կը ձեւակերպէի: Իմ աշխարհս իմ մէջս էր, ոչ թէ անշունչ պուպրիկներու մէջ, մինչդեռ Սանդուխտ հանրմի ներքին աշխարհը թափուր էր: Այդ չէի կարող դատել այն ժամանակ, բայց շփոթ կերպով կը զգայի եւ այլեւս չուզեցի բարձրանալ պուպրիկներու սենեակը: Բայց օր մը Սանդուխտ հանրմ յանկարծ թողուց ձեռքի գործը, մուրրուն երեւոյթ մը առաւ եւ ըսաւ.

– Կարծեմ Գոհարիկս հիւանդ է...

Եւ մէկ շունչով վազեց վերի սենեակը:

Ես ամբողջ օրը, անախորժ զգացումի մը ազդեցութեան տակ, թափառեցայ պարտէզը եւ երբ Սանդուխտ հանրմ իջաւ վար, յայտնեցի որ կ'ուզեմ տուն վերադառնալ եւ յամառօրէն պնդեցի որոշումիս վրայ:

Խոստումս պահեցի եւ ոչ ոքի չխօսեցայ Սանդուխտ հանրմի գաղտնիքին մասին, բայց այլեւս երբեք չուզեցի ոտքս դնել անոր տան մէջ:

Կարապետ աղային դպրատունը

Գեո մախատնաճիին տունէն չէինք ելած, երբ ինձ դրին Կարապետ աղային դպրատունը: Չայրս բուռն կերպով դէմ եղած է, երբ մօրաքոյրերս առաջարկած

են ինձ դպրատուն դնել. բայց վերջապես տեղի տուած է, որովհետեւ միտքը շատ պաշարուած էր մօրս վիճակով. անհրաժեշտ էր ինձ հեռացնել տանը մթնոլորտէն, որովհետեւ նաեւ դարձեր եմ այնքան անգուսպ երեխայ որ ինձ տունը պահել, առանց մասնատր հսկողութեան, դարձեր էր անկարելի: Նոյնիսկ երիտասարդ բժիշկը, տոքթ. Թորգոմեան, խորհուրդ տուեր էր հօրս ինձ տեղաւորել գոնէ օրուան մէջ վստահելի տեղ մը եւ գտեր էին որ Նեկտար հանրմը, Կարապետ աղային կինը, այդ դերը կը ստանձնէ:

Նեկտար հանրմ յօժարեր էր ինձ պահելու պաշտօնը, կրկնապատիկ վարձք պահանջելով:

Դպրատունը կը գտնուէր մեր փողոցին մէջ, քանի մը տուն հեռու: Կարապետ աղա քահանայի որդի էր եւ ժամանակին ինքն ալ ուզածէ քահանայ դառնալ: Կ'ըսէին թէ անիկա լրջօրէն պատրաստուած էր այդ կոչումին: Անիկա նման չէ եղած այն մարդոց, որոնք անյաշող ըլլալով ռեւէ արհեստի եւ գործի մէջ կամ, պարզապէս ծոյլ, դարձեր էին քահանայ: Կարապետ աղա ուսմունք ստացած մարդ էր, ուսումնական քահանայի որդի: Բայց անտարակոյս բանով մը կասկածելի դարձեր էր պաշտօնական եկեղեցիին: Երբ քահանայ օծուելու նախորդ իրիկունը թաղին առաջնորդը, ասանդական սովորութեան համեմատ, հարցուցեր էր եկեղեցին գտնուող ժողովուրդին.

– Յիշեալս արժանի՞ է քահանայութեան:

Ներկայ ժողովուրդէն ձայն մը բարձրացեր է եւ գոչեր է.

– Ո՛չ, արժանի չէ:

Կարապետ աղա այդ դէպքէն յետոյ այլեւս ոտքը եկեղեցի չէր դրած, բայց ան կրօնասէր մարդ էր: Այդ դէպքը զինքը խորապէս դառնացուցած էր. ան ծայրայեղ դիրազգած էր եւ բարկացկոտ: Ան կնտած պեխերով, կլոր ճերմակ մօրուքով, զգոյշ շարժումներով, մաքրասէր ծերունի մըն էր որ երբեմն մինակը կը խօսէր. բայց եւ յաճախ կը դառնար յարձակողական: Ան կը կարծէր թէ թշնամիներ զինքը կը հալածեն, թէ «մարդոց փորերը սատանաներ մտած են», «օձի լեզու ունին» եւ այլն եւ ի փոխարէն ինքն ալ կը հալածէր իր կինը եւ իր



Խնամքին յանձնուած երեխաները:

Այլ սակայն անընթացի պատճառներով ինձ հանդէպ քաղցր էր եւ հանդուրժող: Հակառակ իմ գործած տեսակ-տեսակ չարիքներու, Կարապետ աղա զսպուած ժպիտով կը լսէր կնոջը գանգատները իմ մասիս եւ երբ կինը կ'ըսէր.

– Կարապետ աղա բան մը ըրէ, աչքը վախցո՛ւր:

Ան ինձ քովը կ'առնէր, գլուխս կը շոյէր եւ կը խրատէր:

Նեկտար հանըմ, գայրացած ամուսինին այս անսովոր վարմունքէն, կը մըմնջէր.

– Ի՞նչ պիտի ընես, կէօնիւր հագ ըրեր է:

Բայց վերջապէս օր մը ան գժտուեցաւ ինձ հետ:

Երկար ատենէ ի վեր մտադրութիւն մը ինձ կը զբաղեցնէր: Կարապետ աղա կէսօրէ ետք կը քնանար իր քառակուսի պզտիկ բազմոցին անկիւնը: Այդ միջոցին սրահին մէջ կը տիրէր կատարեալ լռութիւն: Ճանճի մը բզզոցը լսելի կը դառնար: Երեխաները չէին համարձակեր նոյնիսկ շնչել: Ակամայ հագ մը կամ փոնգտուք մը սարսուտ կը պատճառէր այդ ահաբեկեալ լռութեան մէջ:

Կարապետ աղա կը քնանար եւ անոր հետքոտ շնչառութիւնը կը տիրապետէր մթնոլորտին: Երբեմն ալ կը խոկար կարճ եւ կտրուկ խորդիւնով մը եւ ամէն անգամ կարծես ինք իր ձայնէն պիտի արթննար: Շուրջը պատերուն վրայ կախուած էին սուրբերու եւ սրբուհիներու պատկերներ, որոնք կարծես զարմացած կը նայէին այդ ձանձրացող երեխաներուն, որոնցմէ ոմանք, գլուխնին դրած իրենց ծալած բազուկներուն վրայ, նոյնպէս կը քնանային ու ես կ'որոճայի իմ մտադրութիւնս:

Վերջապէս օր մը, իսկելով մօրս եւ մօրաքոյրերուս գլխարկները զարդարող արուեստական ծաղիկները, որոնցմով լեցուցեր էի գրպաններս, մօտեցայ քնացած Կարապետ աղային եւ այդ ծաղիկներով զարդարելով զինքը, թաղում սարքեցի: Սրահին երեխաները, մանչ եւ աղջիկ, նախ հեռուէն շարժումներով ուզեցին ինձ ետ կեցնել իմ յանդգութենէս եւ յետոյ շունչերնին բռնած սկսան

դիտել: Ծպտուն չէր լսուէր... բայց երբ ես իմ գործս աւարտեցի, անգապելի ծիծաղը պոռթկաց մէկ եւ միւս ծայրէն:

Կարապետ աղա ընդոստ արթնցաւ եւ, տեսնելով որ ծաղրի ու ծանակի առարկայ դարձեր է, ինկաւ բռուն կատաղութեան մէջ: Ան հաւատացեր էր որ ես ուզեր եմ ակնարկել իրեն պատահած դժբախտութեան, թէ «խրատուած» եմ, այսինքն մէկը ինձ թելադրեր է այդ բանը, եւ երեք օր անդադար գիշեր ու ցերեկ գոչեր էր «Արժանի՞ է քահանայութեան... ո՛չ, արժանի չէ...»:

Նեկտար հանրմ անմիջապէս ինձ բանտարկեց պարտէզի վրայ նայող սենեկի մը մէջ եւ դուռը ետեւէս կղպեց: Յետոյ մօրաքոյրերուս բացատրեր էր որ այդպէս ըրեր էր ինձ փրկելու համար Կարապետ աղայի կոյր կատաղութենէն:

Այդ սենեակին մէջ փակուած, կը լսէի Կարապետ աղայի գոռում-գոչումը, գաւազանի հարուածներ ստացող տղոց վայնասումը, Նեկտար հանրմին լացը եւ աղիողորմ ճիշերը: Եւ ահա սանդուխին վրայ գահավէժ վագրեր, իրար ետեւէ վագող մարդիկ, անկումներ...: Կարծեցի որ աշխարհը կը կործանի, բացի պատուհանը եւ դէպի ինձ երկարող սալորենիի մը ճիւղերուն պլլուելով իջայ պարտէզ: Սալորենին ծաղկած էր եւ իմ շարժումներէս թօթուրելով ճերմակ եւ բուրումնաւէտ թերթիկները ձիւնի պէս կը թափէր գետին: Կը յիշեմ նաեւ դեղնագոյն կատու մը, որ պատին վրայ պոչը ձիգ տնկած իր կանաչ աչքերով ինձ կը դիտէր:

Այդ օրը Կարապետ աղա երկու գաւազան կոտրեր էր մանչ տղոց վրայ եւ գաւազան մը՝ կնոջ վրայ:

Հալածանքի մենամոլութիւնը ունեցող այս կիսախելագար մարդը ունէր մօտ վաթսուն երկսեռ աշակերտներ, որոնց մէջ կային մինչեւ տասնըչորս տարեկան մանչեր:

Տանը մեծ սրահին մէջ, որ ընդարձակ դասարանի վերածուած էր, դրուած էին գրասեղաններ եւ նստարաններ մանչերու համար: Աղջիկները եւ պզտիկ մանչերը կը նստէին սետիրին տախտակին, տունէն բերուած միմտերներու վրայ: Ամէն առաւօտ աղօթք կ'ընէինք, ոտքի կանգնած եւ երեսնիս դարձուցած դէպի

արեւելք: Երբեմն կը ծնրադրէինք, երբեմն ոտքի կ'ելլէինք տրուած նշանին համեմատ եւ պէտք էր որ մեր ձեռքերը կիսաբաց բռնած ըլլայինք մեր կուրծքերուն վրայ ողորմութիւն ուզող մուրացկաններու պէս: Այս աղօթքէն ետքը, որ ժամ մը կը տեւէր, Կարապետ աղա կը սկսէր դասը: Դիմացը պատին վրայ կախուած էր մեծ տախտակ մը հայ այբուբենի տատերով, որոնց իւրաքանչիւրը բաժնուած էր քառակուսի սեւ գիծերով: Կարապետ աղա իր երկար գաւազանին ծայրը կը դնէր տառի մը վրայ եւ աշակերտներէն մէկուն անունը կուտար: Եթէ այդ դժբախտը չճանչնար տառը, Կարապետ աղայի ճկուն գաւազանը ետ կը դառնար եւ անվրէպ կ'իջնար տղուն գլխուն: Իրենց գիտութեան վրայ անհաստատ տղաքը առաջուց, դեռ պատասխան չտուած, թեւերնին կը բարձրացնէին եւ վահանի պէս կը պաշտպանէին իրենց գլուխը: Այդ շարժումը ոմանց մէջ այնքան օթոնաթիք դարձած էր որ երբ հեռուէն Կարապետ աղային ձայնը կը լսէին, նոյնիսկ ուրիշի մը ուղղուած ատեն, թեւերնին կը բարձրացնէին գլխի մակարդակին:

Ես տատերը արդէն կը ճանչնայի եւ այս արարողութիւններու ընթացքին անձնատուր կ'ըլլայի ամէն տեսակ խաղի եւ չարաճճիութեան: Իմ գլխատուր գոհըս էր գիրուկ տղայ մը, որ աղջիկներուն հետ սետիքին վրայ կը նստէր: Ան Ջմբայենց Գառնիկն էր: Յուսահատ իրեն սարքած խաղերէս, կը ճուար կատուի մը պէս: Այդ Գառնիկը Պետրոս Դուրեանի հօրեղբօր որդին էր: Ան մեծնալէ յետոյ դարձաւ կղերական եւ ես զինքը ճանչցայ տարիներ ու տարիներ յետոյ, երբ Իգմիրի առաջնորդ էր Ղեւոնդ եպիսկոպոս անունով:

Այբուբենի դասէն յետոյ Կարապետ աղա կ'անցնէր ասելի հասակատրներու դասերուն: Ութ-ինը տարեկան տղաքը կը կարդային Աւետարան, իսկ ասելի մեծերը՝ Նարեկ: Կարապետ աղա ուշադիր էր արտասանութեան եւ բառերու շեշտատրման: Անտարակոյս գրաբար լեզուի արտասանութեան տեսութիւն մը ունէր կամ ասանդաբար հասեր էր իրեն եւ որը կ'ուզէր կիրառել իր աշակերտներուն վրայ: Ան ձեռքը համաշափ շարժումներով կը զարնէր գրասեղանին եւ կը նշանակէր վանկը, որ պէտք էր շեշտել: Եւ որպէսզի տղաքը լաւ սորվին շեշտը եւ չմոռնան, տուեալ վանկը կ'երկարաձգէր: Երբեմն ընթերցումը կ'ըլլար հաւաքական եւ համերգի մը պէս կը լսէի ու կը հետեւէի կշռոյթին: Բայց երբ ինքը, Կարապետ աղան կարդար, այն ատեն

երկարաձգումները եւ գրասեղանին վրայ չափը չէր ըլլար: Ան կը կարդար ըստ իր տեսութեան օրէնքներուն, գիտութեամբ եւ զգացումով: Ուշադրութիւնս սեւեռած իր վրայ, գմայլանքով կը լսէի գրաբար լեզուի ընթերցումը, որ ինձ կուտար արձանային ձեւերու տեսիլքներ: Երբեմն Կարապետ աղայի նայուածքը կը հանդիպէր ինձ, կը զգածուէր իմ վերամբարձ հիացումէս եւ ընթերցումէն յետոյ, յուշիկ քայլերով ան կուգար ինձ մօտ, ձեռքովը մագերս կը շոյէր, կամ թուշս բռնելով դէմքս կը բարձրացնէր, պահ մը ինձ կը նայէր մտախոհ, յետոյ կ'երթար իր անկիւնը ձեռքերով տարտամ եւ գուսպ շարժումներ ընելով:

Օր մը ինձ իր բազմոցին առաջ կանչեց եւ հարցուց.

– Կ'ուզե՞ս Աւետարան կարդալ:

– Կ'ուզե՛մ, ըսի:

– Ըսէ՛ հայրիկիդ որ գիրք առնէ:

Հայրս դիմադրեց եւ խօսեցաւ ինձ թաղին Ս. Խաչ վարժարանը դրկելու մասին:

– Տահա պզտիկ է, կ'ըսէին մօրաքոյրերս:

Անոնց կարծիքով Ս. Խաչ վարժարանին մէջ երբեք չէի գտնար Նեկտար հանրմին խնամքները եւ յետոյ՝ կ'ոջլուտէի...

Այսուամենայնիւ Կարապետ աղա իր Աւետարանին մէջէն սկսաւ ինձ սորվեցնել գրաբար կարդալ եւ քերականական օրէնքներ: Շուտով սորվեցայ հարկ եղած ատեն շեշտը տալ եւ, հետեւելով վարժապետի ձեռքի շարժումին, ես ալ իմ փոքրիկ ափովս կը զարնէի գրակալին: Ես, որ անգուսպ երեխայ էի, այդ դասի ժամերուն կը դառնայի հլու եւ կարծես կ'ենթարկուէի մոզական ազդեցութեան մը: Ծունկի եկած Կարապետ աղայի բազմոցին առաջ, անձնատուր անսահման գմայլանքի, կը կարդայի շեշտելով եւ թեթեւ մը երգելով եւ, ձայնիս հաւնած, կ'ուզէի այդպէս շարունակել:

Բայց հեռուն մուէզիներ կ'երգէր Էզանը եւ պատի ժամացոյցին վրայ, որուն շրջանակը գոիցերիական գիղ մը կը ներկայացնէր, սլաքը ցոյց կու տար կէս

օրը: Կարապետ աղայի վտիտ գանգակը կը հնչէր եւ մանչ ու աղջիկ աղօթքի կը կենային:

Ճաշէն յետոյ դարձեալ աղօթքը, ինչպէս եւ երեկոյին մեկնելէ առաջ, իսկ մեծ պահքի օրերուն ամբողջ յետմիջօրէները կ'անցընէինք աղօթելով եւ ապաշխարելով:

Ես սկսած էի հասկնալ գրաբարը եւ կարգ մը աղօթքներու եւ շարականներու բովանդակած բանաստեղծութիւնը, ինչպէս նաեւ երաժշտութիւնը կը հրապուրէր ինձ, բայց կրօնական զգացումը արմատ չէր կապեր իմ էութեանս մէջ: Ոչ մեծ մօրս ջերմեռանդութիւնը, ոչ Կարապետ աղայի հարկադրած անվերջ աղօթքները ինձ չառաջնորդեցին դէպի կրօնական զգացումը, նոյնիսկ ժամանակատր կերպով:

Կարապետ աղայի դպրատանը պատահած դէպքէն յետոյ անկարելի էր այլեւս հոն յաճախել: Հարկ եղաւ ուրեմն որոշում մը առնել:

Մաքրիկ մօրաքոյրս կ'ուզէր որ մայրապետներուն դպրոցը երթամ, որպէսզի Ֆրանսերէն սորվիմ. մեծ մայրս կը փափաքէր որ մեզ երկուքս դնեն Մեզպուրեան վարժարան, ուր կը յաճախէին Սկիւտարի բարեկեցիկ եւ հարուստ ընտանիքներու աղջիկները: Գալով Երանիկ մօրաքրոջս՝ այն կարծիքը ունէր որ այդ բոլորը պարապ բաներ են:

– Իշտէ Պօղոսը եւ Պետրոսն ալ դպրոց գացեր են, ի՞նչ են եղեր, կ'ըսէր ան ու կ'առաջարկէր մեծը կար կարողի մը քով աշկերտ դնել, իսկ պզտիկը՝ որ խելօք եւ հմուկ չոճուխ էր, առայժմ պահել տունը:

Հայրս բոլոր կարծիքները լսելէ յետոյ յայտնեց թէ թաղային վարժարանէ դուրս բոլոր միւս դպրոցները անընդունելի էին իրեն համար:

– Թաղին դպրոցը, կ'ըսէր հայրս, գիտեմ, շատ թերութիւններ ունի, բայց մերն է, մեր ամենուսն է:

Եւ ահա օր մը մեզ երկուքս առաջնորդեցին Ս. Խաչ վարժարանը, որուն մուտքի թուղթերը հայրս գացեր առեր էր տնօրէնէն:

Այն ատեն ես տասը տարեկան էի եւ քոյրս՝ վեց տարեկան:

Որոշուած էր որ քոյրս պիտի շնչէին ծաղկոցը, որ գէշ եւ անխնամ վիճակի մէջ էր եւ ամէնքը կը կոչէին խամրոց:

Երիտասարդ եւ սիրուն վարժուիի մը բռնեց մեր ձեռքերէն եւ տարաւ աղջկանց բաժնի երկրորդ հարկի ընդհանուր սրահը, ուր այդ ժամուն հաւաքուած էին բոլոր դասարաններու աշակերտուհիները:

Անմիջապէս դպրոցներու յատուկ ծամուած թուղթի, մելանի եւ փոշիի հոտը մեզ դիմաւորեց: Վարժուիին մեզ առաջնորդեց մեզ համար որոշուած տեղը եւ ժպտելով պահ մը խօսեցաւ ընդհանուր հսկիչին հետ, որ թուխ, կարճահասակ եւ գէր օրիորդ մըն էր:

Ես եւ քոյրս՝ Մաթիլտ, դեռ անվարժ դպրոցական նստարաններու, կոնակնիս դարձուցինք գրասեղանին եւ նստեցանք մեզ համար հանգիստ, ոտքերնիս կախած դուրսի կողմը: Անմիջապէս քրքիջներ լսուեցան մեր շուրջ բոլորը եւ մեզ առաջնորդող վարժուիին իր խօսակցութիւնը ընդհատելով եկաւ մեզ տեղաւորեց ինչպէս հարկն էր:

Յետոյ գիրք մը բացին եւ ինձ տուին, որպէսզի կարդամ: Ես արդէն շատ սահուն կը կարդայի. վերցուցի ընթերցանութեան գիրքը եւ սկսայ ձայնս ձգել եւ կարդալ, ինչպէս սորված էինք Կարապետ աղայի մեթոտով: Հարկ եղած վանկին վրայ շեշտը կը դնէի, վանկը կ'երկարածգէի եւ ձեռքովս գրասեղանին զարնելով կը նշանակէի երկարածգման չափը: Ընդհանուր ծիծաղ եւ քրքիջ տակն ու վրայ ըրին սրահը: Հսկիչ վարժուիին իր սեղանին առաջ անցած մէկ ձեռքով անվերջ քանակը կը զարնէր սեղանին եւ միտով կը զանգահարէր, որպէսզի սրահը հանդարտի: Աչքիս ծայրով կը տեսնէի որ մեծ աղջիկները կողերնին բռնած կը նետուէին մէկ աջ եւ մէկ ձախ ու կը մարէին խնդալէն: Առաջին պահուն շհասկցայ որ իմ արտասովոր ընթերցանութեան եղանակս էր որ առաջ կը բերէր այդ ծիծաղները եւ տակն ու վրայ կ'ընէր սրահը, բայց երբ հասկցայ, տաք ջուր իջաւ գլուխէս վար, որուն յաջորդեց պաղ քրտինք: Քոյրս, Մաթիլտ, կու լար, իսկ ես կը նայէի ամբողջ սրահին ոխերիմ զգացումներով:

Առաջին անգամն էր որ իրապէս հաղորդակցութեան կը մտնէի արտաքին աշխարհին հետ: Նոյնիսկ Կարապետ աղային դպրատունը, դեռ երբեք, իմ խարիսխէս, մայրենի տունէս չէի կտրուած: Առաջին անգամն էր, ուրեմն, որ առանց տնեցիներուն մէկն ու մէկին պաշտպանութեան, երկու քոյր նետուեր էինք դուրսի անձանօթ եւ թշնամական աշխարհին մէջ:

Ընդարձակ սրահը իր շարք-շարք նստարաններով, որոնք վրաներէն անհամար գլուխներ կը դառնային դէպի մեզ, ալեկոծ ծովու մը տպատրութիւն կ'ընէր: Քոյրս կը շարունակէր լսլ աղիողորմ հեծկլտանքներով եւ ես կը նայէի շուրջ բոլորս՝ կառչելու տեղ մը փնտռելով: Ոչ մէկ բարեկամական նայուածք չէր պատասխաներ իմ ակնարկիս: Այն ատեն չեմ գիտեր ի՛նչ ուժէ մը մղուած ելայ նստարանին վրայ եւ կանգնեցայ: Ձեռքերս կապեր էի կոնակս եւ շուրջս կը դիտէի, դառնալով մէկ եւ միւս կողմը: Հսկիչ վարժուիին եկաւ ինձ մօտ, կրկին նստեցուց եւ խրախուսելու համար ինձ ըսաւ թէ շատ լաւ կը կարդայի, բայց թէ ոչ պոռալու պէտք կար, ոչ ալ վանկերը շեշտելու:

Ինձ դրին երրորդ դասարանը եւ քոյրս՝ վեցերորդ: Այն հանգամանքը, որ ընտելացած էի գրաբար ընթերցանութեան, ինձ վարկ տուաւ դասարանիս մէջ: Շուտով ուշադրութիւն գրաւեցի նաեւ պատմութեան եւ աշխարհագրութեան մէջ, որովհետեւ ոչ միայն շատ ուժեղ յիշողութիւն ունէի, այլեւ միտքս պահածս պատմելու ընդունակ էի, իսկ յիշողութեան բացերը կը լրացնէի ճարպիկ կերպով: Դասատուներս առհասարակ ուշադրութիւն կը դարձնէին ինձ: Կը համարէին որ շատ ընդունակ աշակերտ եմ, բայց ծոյլ, որովհետեւ երբեք չէի պատրաստեր գրաւոր դասերս: Դասամիջոցներուն, ցերեկուան արձակուրդին եւ իրիկունը դպրոցէն արձակուելէ յետոյ, անսանձ եռանդով անձնատուր կ'ըլլայի խաղերու: Յաճախակի կը կորսնցնէի գիրքերս եւ տետրակներս, երբեմն նոյնիսկ կրկնոցս եւ կրկնակօշիկներս: Թէ՛ դպրոցը եւ թէ տունը ամէնքը կը գանգատէին ինձմէ, կը սաստէին, կը պատժէին եւ նոյնիսկ կը ծեծէին: Ես, որ հիւանդութեան եւ այլ պատճառներով եղած էի երեխայ մը, որուն հետ միշտ քնքշութեամբ կը վերաբերուէին, այժմ դարձեր էի պատուհաս մը, որ չէին գիտեր ի՛նչպէս գապել:

Որովհետեւ ոչ ոք, ոչ ինձ գանգատող ուսուցիչները, ոչ իսկ հայրիկս չէին գտած միջոցը ուղղութիւն տալու, հուն մը տալու այն ուժերուն, որ իմ մէջս կը

բարձրանային, ինձ կը դրդէին եւ որոնք կ'արտայայտուէին երբեմն իբր բուն զգացումներ եւ յաճախ ինձ կը մղէին ըստ երեւոյթին անտրամաբանական շարժումներու եւ արարքներու...:

Այլ սակայն չեմ կարող ըսել թէ դժբախտ երեխայ եղած եմ. այդ տարիներուն դժբախտութեան գաղափարն իսկ չունէի: Իմ անհատական տրամադրութիւններս կը հանդիպէին բուն դիմադրութիւններու եւ ես կը պայքարէի անընդհատ Ֆիզիքապէս եւ խելքով: Երբեք չէի համարեր որ ուժէս վեր է այդ պայքարը եւ նահանջելու ոեւէ գաղափար չունէի: Կը պայքարէի տնեցիներուն դէմ, դպրոցին դէմ, իմ տարեկիցներուս դէմ, անդու անդադար: Երբեմն ժամանակաւոր յաղթանակ մը կը տանէի, բայց շատ աւելի յաճախ կը պարտուէի: Բայց այդ պարտութիւնները ոչ ինձ կը դառնացնէին եւ ոչ ալ կը յուսահատեցնէին: Պարտութիւնը կը մարսէի, կը չեզոքացնէի, անմիջապէս ընդունելով որ պարտուած եմ եւ կը վերսկսէի նոր պայքարի: Այդ էր իմ կեանքի անհրաժեշտութիւնը եւ այդպէս ալ մնաց մեծնալէս յետոյ իմ կեանքի բոլոր շրջաններուն, տարբեր պայմաններու եւ հանգամանքներու մէջ: